

ՈՒՆԷՐ ԻՐԱՒՈՒՆՔ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՁՈՐՐՈՐԴ

Շոյն հիւրասենեակը՝ նոյն կահ-կարասիով: Դաշ-
նամուրի վրայ դրած է Անտոնի գլխարկը: Հետզհետէ
մթնում է: Վարագոյրը քարծրանալիս Մարմարեանը
նիրհած է ըագկաթոռի վրայ երեսը դէպի ծախ պա-
տը, ձեռափայտը քովը դրած: Մի քանի վայրկեան
անցած՝ ներս է մտնում Վիրժինէն, վառ լամպարը
դնում է զահաւորակի առջեւի սեղանի վրայ, պատ-
րոյզը քարծրացնում է: Բեմը լուսաւորւում է:

ՏԵՍԻՂ I

ՄԱՐՄԱՐԵԱՆ ԵՒ ՎԻՐՃԻՆԷ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Սթափուելով, գլուխը քարծրաց-
նում է եւ աջ ու ծախ նայում: Տեսնելով Վիրժինէին):
Աա, այդ դու ես: Լուսացել է արդէն:

ՎԻՐՃԻՆԷ: (Ժպտալով): Մթնում է, ոչ թէ լու-
սացել է:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Նայելով ժամացոյցին): Աա, ճըշ-
մարիտ, ես այնպէս պինդ էի քնել, որ կարծում էի
գիշեր է...

ՎԻՐՃԻՆԷ: Երեկոյեան եօթ ժամն է:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Պարոնդ տնից չի դուրս եկել:

ՎԻՐՃԻՆԷ: Ոչ, իւր կաբինեթումն է դեռ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Բեր ինչ համար մի սիֆօն...

ՎԻՐՃԻՆԷ: Աչքիս վրայ: (Գնում է սեղանատուն):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Ձեռափայտը վերցնելով, վեր է կենում, մօտենում է Անտօնի առանձնասենեակի դռներին, քաց է անում, զգոյշ նայում է. ներս, նորից ծածկում եւ յետ դառնում): Նա էլ ինչպէս բազկաթոռի վրայ քնել է... Թող քնի, մի փոքր հանգստանայ: Յիմար կեանք...

ՎԻՐՃԻՆԷ: (Բերում է սեղանատնից սիֆօն ու բաժակ եւ դնում սեղանի վրայ): Լցնեմ բաժակը, իլիա Մարտինիչ...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ի հարկէ:

ՎԻՐՃԻՆԷ: (Բաժակը լցնում է, տալիս է նրան):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Դժուր է ու բաժակը դնում սեղանի վրայ: Տեսնելով, որ Վիրճինէն նայում է իրան հետաքրքիր դէմքով): Ինչո՞ւ ես այդպէս մտիկ անում երեսիս:

ՎԻՐՃԻՆԷ: Իլիա Մարտինիչ... (Ձի համարձակում շարունակել):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ի՞նչ?

ՎԻՐՃԻՆԷ: Սիրտս կտրառւում է նրան տեսնելիս...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ո՞ւմ տեսնելիս:

ՎԻՐՃԻՆԷ: Տիրուհուս: Նստած իւր սենեակում, մի գլուխ լաց է լինում ու համբուրում երեսաներին: Ոտքի վրայ չորացել ու ցամաքել է, ոչինչ նրան չի հետաքրքրում... Էն Աստուածը...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Կարծեմ, պարոնդ աւելի վատ դրութեան մէջ է...

ՎԻՐՃԻՆԷ: Ոչ, մի ասէք, իլիա Մարտինիչ... Չըմարիտ է, պարոնս էլ տանջւում է, բայց տիրուհիս, ախ Աստուած... (Արտասուքը սրնելով): Միթէ կարե-

լի է: Իլիա Մարտինիչ, պարոնն օր չի անցնում, որ...
(Նայում է աջ ու ձախ երկիւղով):

ՄԱՐՄԱՐԵԱՆ. Ի՞նչ...

ՎԻՐՃԻՆԷ. Ծեծում է... էն Աստուածը...

ՄԱՐՄԱՐԵԱՆ. (Մեկուսի). Ես այդ գիտէի... (Վիր-
ժինէին). Սուտ մի ասա, անպիտան:

ՎԻՐՃԻՆԷ. Էն Աստուածը, Իլիա Մարտինիչ, աչ-
քովս եմ տեսել... (Հանդարտ լալիս է):

ՄԱՐՄԱՐԵԱՆ. Լռի՛ր, աղջի: Գնա՛, քո բանը չէ:
(Նախասննակից զանգակի ծայն). Զանգակ եմ տալիս,
դնա՛, դռները բաց արա... Բայց ոչ ոքի ոչ մի խօսք,
հասկանում ես, ոչ ոքի...

ՎԻՐՃԻՆԷ. Ի հարկէ, ուրիշներին չեմ ասիլ...
(Գնում է նախասննակ):

Մարմարեանն ընկնում է մտատանջութեան մէջ:

Նախասննակից ներս են մտնում Սոլոմոնն ու
Նատալիան. Վիրժինէն զալիս է, սիֆօնն ու ըստակը
տանում սեղանատուն. Նատալիան տխուր դէմքով
զլիսով ըարեւում է Մարմարեանին եւ անմիջապէս
անցնում ըուղուար:

ՏԵՍԻԼ II

ՍՈԼՈՄՈՆ ԵՒ ՄԱՐՄԱՐԵԱՆ:

ՍՈԼՈՄՈՆ. (Սեղմելով Մարմարեանի ձեռը, նըս-
տում է ըստակածոռներից մէկի վրայ, գլխարկը դնե-
լով սեղանի վրայ). Ի՞նչ նորութիւն կայ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ. Ի՞նչ պիտի լինի, որդը որոճում է
երկուսի էլ սիրտը, իսկ ես հսկում եմ նրանց, ինչպէս
պահնորդ:

ՍՈԼՈՄՈՆ. Բայց այդպէս շարունակել չի կարելի...

ՄԱՐՄԱՐԵԱՆ. Այո, ի հարկէ, չի կարելի... Բայց
ի՞նչ պիտի անել. ձեր աղջկալստամուսութիւնը անսահ-
լութեօ

ման է, անհասկանալի և միանգամայն ոչ խելացի...

ՍՈԼՈՄՈՆ: Գուցէ, բայց ստիպել նրան սիրել չը սիրած մարդուն անկարելի է:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ստիպել, ի հարկէ, չի կարելի, իսկ համոզել, որ յանուն զաւակների պարտաւոր է հպատակուել իւր ճտկատակազրին—կարելի է: Եւ այս ձեր պարտաւորութիւնն է, պարոն Սուրաթեան... Այո, ձեր պարտաւորութիւնն է... Դուք հայր էք...

ՍՈԼՈՄՈՆ: Ես չեմ կարող պահանջել իմ աղջկանից անել այն, ինչ-որ նա համարում է յանցանք —ստել և կեղծել:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Բայց չէ՞ որ Հերսէլին մայր է:

ՍՈԼՈՄՈՆ: Այո՛, բայց, միւսոյն ժամանակ, նա եւ մարդ է, առանձին անհատ, ինքնուրոյն հոգի: Թող ինչ ուզում է խօսի ձեր հասարակական կարծիքը, ոչ ոք, հասկանում էք, ոչ ոք մի ուրիշից, նոյն իսկ հայրը հարազատ զաւակից չունի իրաւունք պահանջելու մարտիրոսութիւն որեւէ պարտականութեան համար: Ես ինքս կենսախինդ մարդ եմ և ընդունակ չեմ որեւէ զոհաբերութեան յանուն ձեր առօրեայ առաքինութեան: (Պառլազա) Դուք գիտէք, որ ձեր բարեկամն այժմ չի ամաչում գոռալ իւր կնոջ վրայ, հայհոյել անգամ նրան: Աս, մի աշխատէք հերքել, բոլոր ծառաները գիտեն այդ...:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Յուսահատութիւնը նրան դարձրել է ներվային և դիւրագրգիռ... Նա սիրում է ձեր աղջկան խելագարի պէս և այն միտքը, թէ կարող է մի օր զրկուել նրանից, տանջում նրան գիշեր-ցերեկ: Ես մինչև անգամ վախենում եմ նրա ուղեղի մասին: Նա ընդունակ է ամեն բանի, այո, ամեն բանի, ահա ինչու ես հեռուում եմ նրան քայլ առ քայլ ստուերի պէս, մոռացած իմ հիւանդութիւնը: Նա դարձել է մտախոհ, մռայլ և այնքան կասկածամիտ, որ ինձ էլ չի հաւատում անգամ...

ՍՈԼՈՄՈՆ: Ամեն ինչ կարող է անել, բացի կաս-
կածելուց: Հերսէլին այն անբաղդ կանանցից է, որոնց
համար խաբելն ու կեղծելը ամենաճանր լանցանքն է:
Նա դեռ ոչ ոքի չի սիրում և եթէ սիրի էլ, ոչ ոքից չի
թագցնիլ և չի վախենալ... Ահա ինչու. գոնէ ես իմ
ձողովից վճռել եմ թողնել ամեն ինչ իւր կամքին: Կա-
մենում է, թող հպատակուի իւր ճակատագրին, չի կա-
մենում, թող...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Թող ձգի զաւակներն ու հեռանալ,
այո՛...

ՍՈԼՈՄՈՆ: Իլիա Մարտինիչ, երեխայ մի լինիք...
Ոչ մի քարասիրտ մայր իւր զաւակներից առանց խորը
պատճառի չի բաժանուիլ... Եւ դուք չը պիտի քար ար-
ձակէք Հերսէլու ետեւից, եթէ նա մի օր հեռանալ այս
տնից... Վերջապէս կան բաներ, որոնց մասին չեմ կարող
պարզ խօսել...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Նայելով Սոլոմոնին խորհրդաւոր)
Ես այդ գիտեմ... Գուշակում եմ...

ՍՈԼՈՄՈՆ: Գիտէք, ուրեմն, լռեցէք...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Ականջ դնելով դէպի առանձնա-
սեննակ) Կարծեմ, զարթնել է: Ի սէր Աստուծու, հե-
ռացէք, նա ձեզ սառնարիւն տեսնել չի կարողանում:
Նա կարծում է, որ դուք լարում էք ձեր աղջկան իւր
դէմ...

ՍՈԼՈՄՈՆ: Ես կը գնամ Հերսէլու մօտ: Ինչ և է,
այսօր պէտք է խնդիրը լուծուի... կամ այսպէս կամ
այնպէս:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Այնուամենայնիւ, աշխատեցէք խա-
ղաղութեամբ լուծել խնդիրը... Նա իսկոյն պիտի գնայ
Միզանդարովի պարտատէրերի ժողովը: Նրա ներկայու-
թիւնն այնտեղ անհրաժեշտ է: Հեռացէք, գալիս է,
կարծեմ...

Սոլոմոնն անցնում է Հերսէլու ընդդաւանը:

ՏԵՍԻՆ III.

ԱՆՏՕՆ ԵՒ ՄԱՐՄԱՐԵԱՆ:

ԱՆՏՕՆ: (Ետրս է մտնում առանձնասենեակից սիւրտուկի կոճակները կապելով): Դու անստեղ ես... Հսկում ես ինձ դայեակի պէս...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ինչ արած, երբ դու քեզ երեսալի պէս ես պահում:

ԱՆՏՕՆ: (Յանկարծ զրգռուելով): Ո՛վ է այնտեղ... Ես լսում եմ նրա անպիտան հօր ձայնը: Այդ մարդիկ, կարծես, երգուել են ինձ խելքից հանելու: Ախ, ոչ, ես չեմ կարող համբերել նրա ներկայութիւնն իմ տանը: (Քայլերն ուղղում է դէպի ըուղուար):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Առաջը կտրելով, ծեռը ընկնում է) Կաց... Եթէ գոնէ մազու չափ ինքդ քեզ յարգում ես, չը պիտի ընդհարուես նրա ծնողների հետ: Այդպիսի խնդիրներում երրորդ անձինք մեղաւոր չեն...

ԱՆՏՕՆ: (Կանգ առնելով, ծեռով շփում է ծակատը: Ապա նայում է Մարմարեանին սուր հայեացքով): Երրորդ անձինք... Այո... (Աւելի զրգռուելով): Բայց ես ինչ գիտեմ, դու ինչ գիտես, լիմար... Դուցէ մեղաւոր է մի երրորդ անձ... Ան, իրան, Իլիա, ինչ ես կարծում, չը կա՛մ մի երրորդ անձ...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Մեղք մի գործիր, Անտոն, դու գիտես, որ ոչ ոք չը կայ...

ԱՆՏՕՆ: (Սթափուելով): Այո, գիտեմ, համոզուած եմ... Ձը կայ երրորդ անձ, չի կարող լինել... Հերսէլին այն կանանցից չէ... Բայց, ախար, ինչո՞ւ (Գրգռում է նորից) ինչո՞ւ է այդպէս վարւում... Ձէ որ ես միևնոյն Բէգմուրեանն եմ, չէ՞ որ ես ոչնչով չեմ փոխուել: Ինչից առաջացաւ այդ ատելութիւնը, այդ սարսափելի դրաման... Իլիա, ասա, ես փոխուե՞լ եմ, ես այժմ ու-

Քիչ մարդ եմ... ծերացել եմ, այո՛, բանի պէտք չեմ,
լաթի կտոր եմ, աղբի զամբիւղի մէջ ձգելու բան, այո՛...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Փոխուել է նա, իսկ դու չես փո-
խուել և չէիր կարող փոխուել... Դժբաղդութիւնը հէնց
գրանուամն է, որ չես կարող փոխուել, ուշ է...

ԱՆՏՕՆ: Բայց ես դուրս կը կորդեմ նրա միջից ալդ-
զգացմունքը... ես կոչնչացնեմ նրա մէջ... ես նրան
խելքի կը բերեմ... Ես... ես... (կատաղի կը ծոտտում
է ծնունդը)...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Կոպտութեամբ, կռուով, հախոյանք-
ներով ու ծեծով: Երբէք... Ընդհակառակը, դու նրան
աւելի կը զգուեցնես և աւելի ինքդ քեզ կը ստորաց-
նես թէ նրա և թէ ուրիշների աչքում:

ԱՆՏՕՆ: Ուրեմն, ցոյց տուր միջոց, Իլիա, միջոց
ցոյց տուր կորցրած հանգստութիւնս գտնելու:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Միակ միջոցը, իմ կարծիքով, նրան
ազատութիւն տալն է:

ԱՆՏՕՆ: Բաժանուել: Երբէք, տմենեկին... Դու
խելագարուել ես, դու խօսում ես ինչպէս լիմար ամու-
րի: Ես այդ մասին լսել անգամ չեմ ուզում: Նա իմն
է եղել և իմն էլ կը մնայ, քանի որ կենդանի եմ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ուժով, բռնութեամբ...

ԱՆՏՕՆ: Բռնութեամբ, իրաւունքներով, օրէնքով,
միւսնային է, ես նրան երբէք ազատութիւն չեմ տալ:
Երբէք թող չեմ տալ, որ անունս զուր տեղը բամբա-
սանքի առարկայ դարձնի... Նա իմն է և իմն էլ կը
մնայ յաւիտեան, որովհետեւ ես այսպէս եմ ուզում...

Ներս է մտում Սամսոնը եւ մինամակ է տալիս
Անտոնին:

ԱՆՏՕՆ: Ի՞նչ է այդ: (Բաց է անում նամակն ա-
րագ, կարդում եւ դէն շարտում: Սամսոնին): Ասա,
որ ինձ չը սպասեն:

Սամսոնն ուզում է գնալ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Վերցնելով յատակից նամակը, Սամսոնին) Սպասիր: (Կարդում է նամակը: Անտոնին) Ձի կարելի, Անտոն, դու պէտք է անպատճառ դնաս այդ Ժողովը: Երկու անգամ յետաձգել են քո պատճառով: Ձէ որ սնանկացած Միզանդարովի ամենամեծ պարտատէրը դու ես, առանց քեզ չի կարելի մի բան որոշել: (Սամսոնին) Ասա, որ կը գալ իսկոյն: (Սամսոնը գնում է) Դէհ, գնանք, ես քեզ կուղեկցեմ: Ես էլ ուզում եմ գնալ, ես էլ ստանալիք ունիմ և հրաւեր եմ ստացել: Գնանք:

ԱՆՏՈՆ: Ես կը կամենայի ամեն ինչ կորցնել և ընկնել յետին չքաւորութեան մէջ, միայն թէ սիրտահանգիստ լինէր: Գնանք, ես կատաղում եմ լսելով այն մարդու ձայնը: (Ձգում է ատելութեան լի հայեացք դէպի ըուղուար):

Գնում է նախասենեակ Մարմարեանի հետ:

ՏԵՍԻՆ IV

ՀԵՐՍԵԼԻ, ՍՈՒՈՄՈՆ ԵՒ ՆԱՏԱԼԻԱ

ՍՈՒՈՄՈՆ: (Ամենից առաջ ներս մտնելով) Ո՛րք է նա, ես ուզում եմ նրա հետ, վերջապէս, խօսել: Ծեծել իմ աղջկան, իմ Հերսէլոն...

ՀԵՐՍԵԼԻ: Պապա, և՛ ոչ մի խօսք: Ես խնդրում եմ քեզ չը խառնուել մեր յարաբերութեան մէջ: Ես ինքս կը մտածեմ և կորոշեմ իմ անելիքը:

ՆԱՏԱԼԻԱ: (Սաստիկ յուզուած): Դու դուրս եկ, գնա քո բանին: Ի՞նչ քո գործն է: Քեզ նման մարդը իրաւունք չունի ուրիշներին խրատելու...

ՍՈՒՈՄՈՆ: Իսկ քեզ նման կինը իրաւունք չունի մօր դեր կատարելու: Դու անբաղդացրիք իմ աղջկան, դու քո ագահութեամբ ու քողասիրութեամբ: Բէգմուրովը Հերսէլու գոյգը չէր...

ՀԵՐՍԵԼԻ: (Տանջանքով եւ ձեռները փշրտելով): Ի սէր Աստծու, ծնողներ, թողէք ինձ հանգիստ: Ախ, այս ի՞նչ անտանելի դրութիւն է:

ՍՈԼՈՄՈՆ: Ոչ, ես չեմ կարող այլ ևս սառնասիրտ մնալ: Դու ոտքի վրայ դիակ ես դարձել: Դու այլ ևս այս տանը մնալ չես կարող: Վերցրո՛ւ երեխաներդ, գնանք իմ տունը... Բաժանուի՛ր այդ կոպիտ գիւղականից... Ձե՛ տալ երեխաներին... Թող չը տայ, դո՛ւ եկ, յետոյ ես երեխաներիդ էլ կը խլեմ նրանից:

ՆԱՏԱԼԻԱ: Խելքդ Աստուած առել է, ալ թէ ինչ կարող եմ ասել: Ո՛ւմ ես տանում այստեղից, ո՛ւր: Ի՞նչ է պատահել, որ նա բաժանուի մարդուց: Վերջապէս, ո՞վ կընդունի նրան իմ տունը: Դու կարծում ես, որ ես կարող եմ այդպիսի խայտառակութիւն տանել: Մարդ է, տաքացել է, արիւնը գլխովն է տուել, մի անգամ խփել է: Ի՞նչ եղաւ, աշխարհը խօմ չը քանդուեց: Հազար անգամ բաղբաւոր կը լինէի, եթէ դու էլ ինձ ծեծէիր, քան թէ այնպէս անպատուէր: Հերսէլի, դո՛ւրս բեր գլխիցդ քամիները... Ականջ մի դնիր այդ կաշաղակին... Նա չը գիտէ ինչ է ասում:

ՀԵՐՍԵԼԻ: Հանգստացիր, մամա, հանգստացիր դու էլ, պապա: Ես ինքս իմ գլխի հոգսը կը տեսնեմ: Միայն դուք հեռացէ՛ք այստեղից, ինձ մենակ թողէ՛ք: Պապա, աղաչում եմ, հեռացի՛ր: Ես ուզում եմ մենակ մնալ:

ՍՈԼՈՄՈՆ: (Բռնում է Հերսէլու ձեռը եւ նայում նրան): Հերսէլի, լաւ նայիր աչքերիս: Զգո՛յշ, հասկանո՛ւմ ես, զգո՛յշ, լիմար բաների մասին չը մտածես...

ՀԵՐՍԵԼԻ: Ոչ, պապա, հանգիստ կաց, ես այնքան էլ թուլամորթ չեմ: Այդ երբէք չի լինիլ, հասկանո՛ւմ ես, երբէք, պապա: Ես ապրել եմ ուզում և կապրեմ: Նա ֆիզիքական ոյժ է գործ դնում, ես գործ կը դնեմ բարոյական ոյժ: Ես կապացուցանեմ նրան, որ կինն էլ կարող է ունենալ սեպհական ձգտում և կամքի ոյժ,

որ կինն էլ կարող է փշրել իւր շղթաները... Մամա, լաց մի լինիր, անցնում է այն ժամանակը երբ կնոջ գէնքը միայն արտասուքն էր... Դու այդ կը տեսնես... Թող ինչ ուզում եմ ասեն ուրիշները... Դեհ, հեռացիր, մամա...

ՍՈԼՈՄՈՆ: Գնանք, Հերսէլին ինքը մեզանից լաւ գիտէ թէ ինչ է հարկաւոր անել: (Առանձին Նատալիային): Մենք կարող ենք յետոյ էլի գալ: Լսիր, աղջիկս, ինչ որ էլ վճռես անելու, իմացիր, որ ես միշտ պատրաստ եմ քեզ պաշտպանել և օգնել...

ՀԵՐՍԷԼԻ: Շնորհակալ եմ, պապա: (Համըռուրում է նրան): Դու բարի ես:

ՆԱՏԱԼԻԱ: Իսկ ես միթէ չար եմ, աղջիկս: Ես միթէ ծնող չեմ: (Աչքերը սրբելով): Ինչ արած, եթէ չես կարող ինքդ քեզ լաղթել, զգուանքդ սպանել, ճար չը կայ, իմ տունն էլի քոնն է, (Համըռուրում է Հերսէլու հետ): Բայց ինչ էլ որ անես, լաւ մտածիր, յետոյ արա: Լսում ես նրանց ձայնը: (Եշան է անում դէպի ընդունարի կողմ):

ՀԵՐՍԷԼԻ: (Հեկեկանքը զսպելով, արձակում է մօր վրայ եւ ջերմաջերմ համըռուրում):

Նատալիան Սոլոմոնի հետ գնում է դէպի նախասենեակ: Դռների մօտ Հերսէլին, մի անգամ եւս յարձակուելով նրանց վրայ, համըռուրում է եւ ապա քանի մի վայրկեան նայում է նրանց ետեւից: Այնուհետեւ մօտենում է լուսամտին, նայում փողոց, յետ դռնում: Գնացի՛ն: Խեղճ մարդիկ, եթէ իմանալիք իմ լանցաւոր միտքը... (Մօտենում է սեղանատան դռներին նայում ներս, յետոյ գալիս, նստում է զրասեղանի քով, արմունգները յենում սեղանին, ծնոներով ընդունում գլուխն եւ ընկնում մտածողութեան մէջ: Ետոյ, ծեռով վճռական շարժումն անելով, վերցնում է զրիչն ու զրում: Նախասենեակից լսում է զանգակի ծայն:

Հերսէլին զգուժմ է՝ պատռտում է նամակն ու ցնցում զամբիւղի մէջ։ Աշխատում է ուշքը ժողովել)։

Յերս է մտնում Աննա Ալիմբարեանը։ Յա հագած է ճանապարհի հագուստ։

ՏԵՍԻՆ V

ՀԵՐՍԵՆԻ ԵՒ ԱՆՆԱ ԱԼԻՄԲԱՐԵԱՆ

ԱՆՆԱ. (Նայելով աջ ու ձախ, մօտենում է Հերսէլուն եւ համբուրում)։ Խոստովանում եմ, դողալով եմ մտել այստեղ։ Ամուսինդ, կարծես, ինձ իւր ոխերիմ թշնամին է համարում։ Բայց ինչպէս գնայի առանց քեզ տեսնելու։

ՀԵՐՍԵՆԻ. Ուրեմն, այսօր անպատճառ գնում էք։

ԱՆՆԱ. Այո, առանց այն էլ շատ ուշացանք։ Չը գիտեմ այժմ ի՞նչ լաջողութիւն ինձ, արդեօք, քննութիւն տալ։ Աստուած իմ, այդ ինչ ես դարձել, Հերսէլի։ Հիւանդ ես։

ՀԵՐՍԵՆԻ. (Աշխատելով անհոգ ժպտալ)։ Տարուալ այս ժամանակին ես միշտ նիհարում եմ։

ԱՆՆԱ. Նիհարութիւնը չէ միայն, Հերսէլի, դէմքդ արտայայտում է անհուն վիշտ, տառապանք։ (Մօտենալով առնում է ձեռները)։ Հերսէլի, ես գիտեմ բոլորը, բոլորը գիտեմ։ Դու անչափ դժբաղդ ես։

ՀԵՐՍԵՆԻ. (Ձեռները խլելով եւ երեսը դարձնելով նրանից)։ Կառախումբը ո՞ր ժամին է գնում։

ԱՆՆԱ. Իննից քառորդ անց։ Ախ, չը լինի թէ ուշանամ։ (Նայում է իւր ժամացոյցին)։ Ոչ, դեռ ուշ ժամը չը կայ։

ՀԵՐՍԵՆԻ. Մի վճռական շարժում անելով, մօտենում է սեղանատան դռներին, մատը սեղմում

զանգակի կոծակին։ Ներսից լսում է զանգակի ծայն)։
Նստի՛ր, Աննա, դեռ բաւական ժամանակ ունես...

Աննան նստում է գրասեղանի բոլ, մի արմունքը
յենում սեղանին եւ, գլուխը դնելով ծեռի անիին, մոայլ
հայեացքը ձգում է անորոշ տարածութեան մէջ։

Վիրժինէն ներս է մտնում սեղանատնից։ Հեր-
սէլին դռների մօտ ինչ-որ շնչիւնով պատուիրում է
նրան։ Վիրժինէն մի վայրկեան տարակուսանքով նայում
է նրան։ Հերսէլին շտապեցնում է նրան։ Վիրժինէն
շտապով անցնում է ըուդուար, ծանապարհին նայելով
Աննային եւ ուսերը վեր քաշելով։

ԱՆՆԱ. (Գլուխը քարժրացնելով)։ Հերսէլի, եթէ
ինձ հիւրասիրելու պատրաստութիւն ես տեսնում, գուր
է, կուշանամ։

ՀԵՐՍԵԼԻ. (Տարօրինակ յուզուած ծայնով, քայց
աշխատելով իրան զսպել)։ Սլո, ես ուզում եմ քեզ
հիւրասիրել, բայց ոչ այս տանը, այլ... Աննա, ես քեզ
համար պատրաստում եմ մի սիւրպրիզ, կը զարմանաս
գուցէ, բայց չը պիտի զայրանաս։

ԱՆՆԱ. Այդ Բնչ տարօրինակ խօսքեր են, Հերսէլի,
և ինչ տարօրինակ եղանակով ես արտասանում։ (Ոտ-
քի կանգնելով, նորից առնում է նրա ծեռները իւր
ծեռների մէջ)։ Նայի՛ր ինձ, ես աչքերիդ մէջ կարդում
եմ ինչ որ անսովոր վճռականութիւն։ Հերսէլի, ամու-
սինդ քեզ դարձեալ վշտացրել է, ոչ, ոչ, վերաւորել է։
Պատմի՛ր, Բնչ է պատահել, Հերսէլի։ (Ուզում է գրկել)։

ՀԵՐՍԵԼԻ. (Ազատուելով նրա գրկից)։ Թո՛ղ ինձ,
գուցէ ես արժանի չեմ, որ ինձ գրկի իմ ընկերուհին։
(Մօտենում է լուսամտին եւ նայում փողոց)։

ԱՆՆԱ. Ոչինչ չեմ հասկանում։ Քանի գնում այն-
քան աւելի անհասկանալի ես դառնում, Հերսէլի... Մի-
թէ ինձանից գաղանիք ունիս։ Զէ որ ես գիտեմ բոլորը,

գլխեմ ինչ ծանր դրամա է կատարուում այժմ քս հոգում:

ՀԵՐՍԵԼԻ. Երբէք չես կարող երեւակայել ինչ է կատարուում իմ հոգում, երբէք, քանի որ դեռ մայր չես: (Քայլերն ուղղում է դէպի ընդունար, կէս ծանապարհին կանգ է առնում):

ԱՆՆԱ. Այստեղ կամ արտաքոյ կարգի մի բան է պատահել կամ պիտի պատահի: Հերսելի, մի տանջիր ինձ այդ մութ խօսքերով, ասա պարզ: Դու բաժանւում ես նրանից:

ՀԵՐՍԵԼԻ. (Ինքն իրան) Երեխաներ: Միթէ ես նրանց համար մայր եմ այժմ կամ երբ և է եղել եմ: Այն օրից, երբ հասկացել եմ, թէ նրանց հետ բաղադուր չեմ, մայրական զգացումն ինձ համար դարձել է անտանելի տանջանք: Ի հարկէ, ես սիրել եմ նրանց, սիրել եմ ինչպէս ամեն մի ֆիզիքական մայր, և ո՞ր կենդանին չի սիրում իւր զաւակներին: Բայց այդ սէրը միշտ խժորոտած է եղել մի տեսակ խուլ ատելութեամբ...

ԱՆՆԱ. (Ջարմացած շարունակ նայում է նրան): Ատելութեամբ...

ՀԵՐՍԵԼԻ. Ոչ ոչ, տանջանքով, անտանելի տանջանքով, երբ լիջել եմ, որ նրանք չը սիրուած մարդուց են, երբ մանաւանդ նայել եմ նրանց դէմքերին և այնտեղ նշմարել որ և է նմանութիւն նրանց և այդ մարդու մէջ: Թող ինչ ուզում են ասեն մայրերն իմ մասին, բայց ես սէր չեմ համարում այն մայրական սէրը, որ սրբադործուած չէ ամուսնական սիրով: Չը կայ անելի մեծ թշուառութիւն, քան տեսնել հարազատ զաւակների մէջ սեպհական սխալի մարմնացումը: Իսկ այժմ... այժմ, երբ նայում եմ նրանց, սիրտս կտրտուում է վշտից, որ ես իսկական մայր չեմ, այլ ֆիզիքական ծնող, որ նրանք բարոյապէս խորթ են ինձ համար: Եւ միթէ դա յանցանք չէ, ամ, Աննա, յանցանք

չէ։ Եւ եթէ յանցանք է, ինչո՞ւ կրկնել, ինչո՞ւ շարունակել ամեն օր։ Ա՜մ, առա՛, Աննա, պէտք է կրկնել, պէտք է շարունակել...

ԱՆՆԱ։ Հարցրու քո սրտից, քո հոգուց, սիրելիս։ Այդ տեսակ հարցերի պատասխանը մարդ միայն իւր մէջ պիտի փնտրի...

ՀԵՐՍԵԼԻ։ Հարցնեմ հոգուցս։ Ախ, ես շատ անգամ և երկար ժամանակ խորհրդակցել եմ հոգոյս հետ և եկել եմ այն եզրակացութեան, որ երկու չարիքից պիտի ընտրել նսեմագոյնը։ Ես մայր եմ, այո՛, ուրեմն և պարտաւոր եմ կրթել իմ զաւակներին։ Բայց ինչ կրթութիւն կարող է տալ իւր զաւակներին մի մայր, որ այդ զաւակներին համարում է սեպհական սխալի և թշուառութեան հետեանք։ Ես աղաւաղում եմ նրանց սիրտն ու հոգին և կը լինեմ անբարոյական մայր եթէ շարունակեմ։ Ոչ ոչ, պէտք է վերջ տալ այս կեղծիքին և ստութեանը։ Ես չունիմ իրաւունք շարունակելու, ամենեւին... Աննա, չունիմ իրաւունք։

ԱՆՆԱ։ Սիրելիս, անգինս, ինչպէս թողնեմ քեզ այդպիսի յուզուած դրութեան մէջ և հեռանամ։ Հանգըստացիր, հոգիս... (Գրկում է)։

ՀԵՐՍԵԼԻ։ (Ազատուելով նրա գրկից)։ Մի վախեանար իմ մասին և բոլորովին մի հոգար։ Դու ինձ մինչև այսօր տեսել ես թող ու տկար, այժմ կը տեսնես ուրիշ բան։ Գնա՛, դու կարող ես ուշանալ։ Իսկ ես չեմ ուզում, որ ուշանաս։ Ես ուզում եմ, որ դու այսօր գնաս, անպատճառ այսօր, հասկանո՞ւմ ես, լետոյ կարող է... ուշ լինել։ Դէհ, բարի ճանապարհ...

ԱՆՆԱ։ Բայց դու ինձ սառն ես ճանապարհ դնում, Հերսելի։ Դու ինչ-որ մտածում ես, ինչ-որ փնտրում, քո գէմքի արտայայտութիւնն ինձ ապշեցնում է։ Հերսելի, յայտնիր ինձ քո զիտաւորութիւնը։

ՀԵՐՍԵԼԻ։ Կիմանաս, շուտով կիմանաս... Ես կը

գրեմ... Հէնց այսօր, իսկոյն, այս ըոպէիս... Գնա, ես վախենում եմ, որ նա գալ... Նա քեզ առում է: Նա քեզ է պատճառ համարում իմ փոփոխութեան: Գնա՛, նա կարող է քեզ վիրաւորել...

ԱՆՆԱ: Մնաս բարով, սիրելիս... Ահա ինչ, Հերսէլի, ինչ էլ որ վճռես անելու, իմացիր, որ իմ համակրութիւնը միշտ քո կողմն է, բացի մի դէպքից... Հասկանում ես ինչ եմ ասում: Այդ, գիտես, խնդրի հնացած տեսակի լուծումն է... Չը պիտի թուլամորթ լինել...

ՀԵՐՍԵԼԻ: Ես երբէք թուլութիւն չեմ ցոյց տալ...

ԱՆՆԱ: Աա, հասկացմը միտքս, ուրեմն, զգոյշ եւ խոհեմ եղիր...

ՀԵՐՍԵԼԻ: (Դառն ծիծաղով): Զգոյշ եւ խոհեմ եղիր... Եւ այդ ասում ես դու, Աննա, դու, որ իմ մէջ առաջացրիր այս հոգեկան յեղաշրջումը քո մտքերի ազատ թռիչքով...

ԱՆՆԱ: Բայց դու հասկացար ինչ մտքով եմ ասում զգոյշ եղիր...

ՀԵՐՍԵԼԻ: Այո, այո, հասկացայ... Դէհ, գնա, հեռացիր, բարի ճանապ... Ոչ, ցըտեսութիւն, շուտով կը տեսնուենք... Գնա, որ նրան չը հանգիպես... (Համըրուում են):

ԱՆՆԱ: Համըրուում է նրան երկու երեք անգամ արագ արագ եւ՛շտապում դուրս նախասենեակի դռներով):

ՏԵՍԻՂ VI

ՀԵՐՍԵԼԻ ԵՒ ՎԻՐԺԻՆԷ

ՀԵՐՍԵԼԻ: (Ծանապարհ դնելով Աննային, մօտենում է ըուղուարի դռներին): Վերժինէ...

ՎԻՐԺԻՆԷ: (Ծրեւում է դռների մէջ): Պատրաստ է):

ՀԵՐՍԵԼԻ: Ասա Սամսոնին, որ մի կառք կանչի:
Շուտ, և ինչ որ պատրաստել ես, տար փողոց: Սպասիր: Քնեցին:

ՎԻՐԺԻՆԷ: Վաղուց են քնել:

ՀԵՐՍԵԼԻ: Շտապիր...

Վիրժինեն անցնում է նախասենեակ:

ՀԵՐՍԵԼԻ: (Մնալով մի քանի վայրկեան անշարժ) Այո, այո, ուրիշ ելք չը կայ... Բոլոր ճանապարհները, բացի այս մէկից, անբարոյական են, բոլորը... (Թոյլ, անվստահ քայլերով անցնում է ըուղուար):

ՎԻՐԺԻՆԷ: (Ներս է մտնում նախասենեակից: Նա չափազանց յուզուած է: Աչքերով փնտրում է Հերսելուն: Յետոյ մօտենում է ըուղուարի դռներին եւ ականջ դնում):
Կարծեմ, լալիս է...

ՍԱՄՍՈՆ: (Ներս է մտնում նախասենեակից):
Կառքը պատրաստ է:

ՎԻՐԺԻՆԷ: (Յոյց տալով նախասենեակի կողմ):
Այնտեղ, դռների մօտ մի կապոց եմ գտել, տար, դիր կառքի վրայ:

Սամսոնը գնում է:

ՀԵՐՍԵԼԻ (Դուրս է գալիս ըուղուարից գլխարկով, ձեռին մի փոքրիկ թղթէ կապով: Մի քանի վայրկեան թուլացած կանգ է առնում դռների մօտ: Յետոյ, ուշքը ժողովելով, վճռական շարժումն է անում):
Ապագան ինչ կարգարացնի, թող ներկան դատապարտի: Մօտեցիր, Վիրժինէ...

ՎԻՐԺԻՆԷ: (Թարձակում է, ըռնում Հերսելու ձեռը, սեղմում է իւր շրթունքներին): Մենք չենք կարող առանց քեզ...

ՀԵՐՍԵԼԻ: (Արտասուքը զսպելով) Քեզ եմ լանձնում, Վիրժինէ: (Համբուրում է եւ շտապով մօտենում զրասեղանին, գրիչ վերցնում, արագ արագ մի

քանի տող գրում, ծրարում եւ ծրարը թողնում սեղանի վրայ)։

ՎԻՐԺԻՆԷ։ (Լուռ արտասուելով, աչքերով հետեւում է նրան) Մենք ինչ պիտի անենք...

ՀԵՐՍԵԼԻ։ Զը պիտի թուլասիրտ լինել... (Մի անգամ եւս համբուրում է Վիրժինէի հետ եւ շտապով անցնում նախասենեակ)։

ՎԻՐԺԻՆԷ։ (Աչքերը սրբելով, հետեւում է նրան։ Փոքր ժամանակ ըստը մնում է դատարկ։ Վիրժինէն յետ է գալիս նախասենեակից, մօտենում է լուսամուտին, թեքւում, նայում ու յետ դառնում) Գնաց։ Ինչո՞ւ արաւ այդ բանը, Տէր Աստուած... (Ուզում է գնալ բուդուար։ Նախասենեակից լսելով զանգակի ձայն, ցնցւում է եւ մնում անշարժ։ Յետոյ շտապով անցնում է բուդուար)։

ՏԵՍԻԼ VII

ԱՆՏՕՆ, ՄԱՐՄԱՐԵԱՆ, յետոյ ՆԱՏԱԼԻԱ եւ ՎԻՐԺԻՆԷ

ՄԱՐՄԱՐԵԱՆ։ (Անտօնի հետ նախասենեակից ներս մտնելով) Այդ ինչ վարժու՞նք էր, ինչ երեխայ-ու թիւն։ Թողնել նիստը ամենահետաքրքրական ըոպէին և հեռանալ, այն էլ այնպէս լանկարծակի։ Նախագահին հարց ես տալիս։ Նա ուզում է պատասխանել։ Դու խօսքը կիսատ ես թողնում և լանկարծ դուրս գալիս։ Այդ ուղղակի խելագարի վարժու՞նք էր։ Տնորուել ես։ Բոլորը ուշադրութիւն դարձրին քեզ վրայ և սկսեցին քչփշալ...

ԱՆՏՕՆ։ Թքել եմ բոլորի վրայ։ Թող ինձ համարեն խելագար։ Ինձ քաջում էր այստեղ մի չար նախագագում, Իլիա, նայիր, ականջ դիր, այնտեղ ոչ ոք չը կայ...

ՄԱՐՄԱՐԵԱՆ. Մի տանջիր քեզ լիմար կասկածներով, Անտոն, Հերսէլին երբէք թոյլ չի տալ... (Կամաց կամաց առաջ գալով, մօտենում է գրասեղանին):

ԱՆՏՈՆ (Դէպի ըուղուար) Վիրժինէ... Ո՛վ կայալտեղ: (Ականջ է դնում): Ձայն չի լսում: Սամսոնի դէմքը շատ կասկածելի էր:

ՎԻՐՋԻՆԷ. (Դուրս է գալիս ըուղուարից եւ կանգնում դռների մօտ, գլուխը, մեղապարտի պէս, կըրծքին թեքելով):

ԱՆՏՈՆ. Ո՛վ կայ ալետեղ: Սուրբեանները գնացին: Վիրժինէն չի պատասխանում:

ՄԱՐՄԱՐԵԱՆ. (Եկատում է նամակը սեղանի վրայ, վերցնում է) Այս քնէ է: Նամակ քո անունով:

ԱՆՏՈՆ. (Ելելով նամակը, շտապով քաց է անում ու կարդում): Այդ արդէն ես չէի սպասում: (Տալիս է նամակը Մարմարեանին, գունաթափուելով) Կարգա:

ՄԱՐՄԱՐԵԱՆ. (Կարդում է) «Եթէ մնալի քո տանը, կը լինէի ա՛նբարոյական կին և վատ մայր: Թող ինձ համարեն անգութ ծնող, բայց կեղծել ու ստել չէի կարող: Մանրամասնութիւնները ճանապարհից»:

Նամակը կարդացուելուց մի քանի վայրկեան առաջ, ներս են մտել Նատալիան ու Սոլովոնն, այնպէս որ նրանք եւս լսում են:

ՄԱՐՄԱՐԵԱՆ. Արծիւը խորտակեց վանդակն և թռաւ:

ԱՆՏՈՆ. Որպէս զի քաղցած սատկի...

ՍՈԼՍՄՈՆ. Ոչ, ես նրան քաղցած չեմ թողնիլ...

ԱՆՏՈՆ. (Նատալիային) Ուրախացէք, ձեր աղջիկը հերոսուհի դարձաւ: (Դառն հեկեկանքով ընկնում է քաղկաթոռի վրայ):

Նատալիան ամօթահար երեսը ծածկում է:

(ՎԱՐԱԳՈՅՐԻՆ ԴՋԵՈՒՄ Է):